

040.1916.250107

«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

«25» հունվարի 2007 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

21 դեկտեմբերի 2006 թվականի N 1916-Ն

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԳՐՈՇՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշման գործունեության պայմանների և տեխնիկական պահանջների կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ

Հավելված  
ՀՀ կառավարության  
2006 թվականի դեկտեմբերի 21-ի  
N 1916-Ն որոշման

**ԿԱՐԳ**

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ՈՒ ՀԱՐԳԱԳՐՈՇՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշման գործունեություն իրականացնող անձանց տեխնիկական պահանջների և գործունեության պայմանների հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշումն ու հարգադրոշումը և դրանց հետ կապված գործողությունները կատարելու իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով հարգորոշման ու հարգադրոշման գործունեություն իրականացնող հաշվառված անձինք (այսուհետ՝ հաշվառված անձինք):

*(2-րդ կետը փոփ. 19.05.16 թիվ 520-Ն որոշում)*

3. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը հարգորոշվում են հետևյալ եղանակներով՝

ա) հարգորոշում թերթավոր սիլիկատային քարի վրա՝ հարգորոշման ասեղների և հակագդուկների միջոցով,

բ) քիմիական տարրալուծում:

4. Թերթավոր սիլիկատային (բնական և արհեստական) քարերի վրա հարգորոշման ասեղների և հակագդուկների միջոցով հարգորոշման հարգավորձման համար նախատեսված քարը պետք է լինի սև գույնի, ունենա հարթ, մանրահատիկ կառուցվածք՝ առանց շերտերի, ունենա բավականաչափ կարծրություն, որը կապահովի թանկարժեք մետաղի քվածքի անհրաժեշտ խտությունը: Հարգավորձական քարը պետք է կայուն լինի թթուների (ազոտական, աղաթթու, ծծմբական) և դրանց խառնուրդների նկատմամբ:

Նախքան իրերը հարգավորձելը՝ հարգորոշման քարը պետք է յուղվի ընկույզի, գերչակի կամ վազելինի յուղով և չորացվի ֆիլտրե թղթով:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը և համաձուլվածքները հարգորոշելու համար օգտագործվում են հարգավորձական ասեղներ (էտալոններ)՝ ըստ հաստատված հարգերի (N 1 ձև): Հարգորոշման ասեղների բռնիչների վրա պետք է դաջված լինեն հարգը և լիգատուրային քաշը: Նոր բաղադրությամբ համաձուլվածքից պատրաստված իրերի

հարգորոշման ժամանակ թույլատրվում է օգտագործել պատվիրատուի կողմից տրամադրված, նշված համաձուլվածքի հարգին համապատասխան ոչ ստանդարտ հարգորոշման ասեղներ:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման համար օգտագործվում են N 2 ձևում նշված հակազդուկները:

5. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը, որոնք բաղկացած են մի քանի երկրորդական և հավելյալ մասերից, հարգորոշման քարի վրա հարգորոշվում են հետևյալ կերպ՝

ա) յուրաքանչյուր իրի հիմնական մասը,

բ) երկրորդական և հավելյալ մասերը հարգորոշվում են հերթականությամբ, հաջորդաբար կամ ընտրովի:

6. Հարգորոշման ներկայացված՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի այն մասերը, որոնք հնարավոր չէ հարգորոշել, հարգի համապատասխանությունը մնում է այդ իրն արտադրողի պատասխանատվության ներքո:

7. Նախքան հարգորոշումը պետք է ուշադիր գննել իրերի արտաքին տեսքը և ընտրել քարի վրա հարգորոշվող անհրաժեշտ մասը: Հարգորոշումը կատարվում է իրի հիմնական մասերում, որտեղ գոդում չկա:

8. Այն իրերը, որոնք հարգորոշման քարի վրա ստուգման ժամանակ կասկածի տեղիք են տվել, ենթարկվում են քիմիական տարրալուծման:

9. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման քիմիական տարրալուծման եղանակներն են՝

ա) ոսկյա իրերի և ձուլակտորների տարրալուծման կուպելավորման մեթոդ,

բ) արծաթյա իրերի և ձուլակտորների տարրալուծման տիտրման և կշռման մեթոդ,

գ) պլատին և պալադիում պարունակող իրերի և համաձուլվածքների տարրալուծման լուծման մեթոդ,

դ) ոսկի և արծաթ պարունակող թափոնի (շիֆ) տարրալուծման լուծման մեթոդ:

10. Թանկարժեք մետաղի հարգորոշումը չպետք է հանգեցնի հետազոտվող իրի կամ դետալի էական վնասմանը: Այն դեպքում, երբ հարգորոշումը հնարավոր չէ իրականացնել առանց իրի կամ նյութի ամբողջականությունը վնասելու, սպա ներկայացված իրի քիմիական տարրալուծումը կատարվում է միայն պատվիրատուի գրավոր համաձայնությամբ՝ թանկարժեք իրերի ընդունման մասին դիմումի (N 3 ձև) հիման վրա:

11. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերից քիմիական տարրալուծման համար նմուշները վերցվում են առնվազն 0,5 գրամ՝ հետևյալ մեթոդներով՝

ա) մեծածավալ իրերից (ոչ սնամեջ)՝ քերելով կամ իրի տարբեր մասերից վերցնելով:

բ) սնամեջ, ֆիլիգրանով և փոքր մասերից գոդված իրերից՝ լուծմամբ, առանձին օղակների կամ ամբողջ իրի հավմամբ: Միջին հարգի որոշման համար (հիմնական համաձուլվածքը գողանյութի հետ) իրի առանձին օղակները կամ, անհրաժեշտության դեպքում, ամբողջ իրի տարբեր մասերը ենթարկվում են տարրալուծման կամ հավման:

գ) լարերից վերցվում է 2 նմուշ՝ կտրելով լարի երկու ծայրից: Կոճերի վրա փայթաթված լարերից տարրալուծում կատարելու դեպքում թույլատրվում է լարի մի ծայրից վերցնել 2 նմուշ: Ընդ որում, նմուշների միջև եղած հեռավորությունը չպետք է պակաս լինի մեկ մետրից:

դ) ոսկյա, արծաթյա, պլատինե և պալադիումե ձուլակտորներից՝ տաշեղների տեսքով՝ շաղափելու միջոցով՝

1000 գրամից ավելի քաշով ձուլակտորներից՝ վերևից և ներքևից՝ մինչև դրանց հաստության կեսը: Կշռուկները վերցվում են ձուլակտորի չորս անկյուններից՝ սկսած անկյունագծի մեկ քառորդ հեռավորության վրա (N 1 նկար),

50-1000 գրամ քաշով ձուլակտորներից՝ մինչև դրանց հաստության կեսը: Այս դեպքում՝ միայն 2 տեղից՝ սկսած անկյունագծի մեկ քառորդ հեռավորության վրա (N 2 նկար):

Մինչև 50 գրամ քաշով ձուլակտորներից նմուշ վերցվում է ձուլակտորների կենտրոնից՝ դրանց ամբողջ հաստությամբ միջանցիկ շաղափմամբ (N 3 նկար):

#### ԻՐՏԵԿ - նկարները չեն բերվում

Եթե անկյունագծով կամ կենտրոնից նմուշներ վերցնելն անհնար է՝ ձուլակտորի փոքր չափերի և ոչ ճիշտ փոխադասավորության (կոնֆիգուրացիա) պատճառով, սպա նմուշներ վերցվում են այն տեղերից, որոնք ապահովում են թանկարժեք մետաղի պարունակության հնարավորինս ճշգրիտ որոշումը:

Ձուլակտորներից մանր տաշեղների ձևով՝ շաղափելու միջոցով փորձանմուշ վերցվում է փոքր տրամագծով շաղափի միջոցով: Ստացված տաշեղները պետք է լինեն մանրացված և մագնիսի միջոցով այլ տարրերից մաքրված:

Ձուլակտորների հարզը որոշվում է դրա տարրալուծման արդյունքների վերևի և ներքևի թվերի միջին թվաբանականով, եթե այդ արդյունքները չեն գերազանցում ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման համապատասխան պետական մարմնի տրամադրած թույլատրելի սահմանները:

12. Թանկարժեք մետաղներ պարունակող թափոնները, որոնք առաջանում են տարրալուծումներ և այլ հարգափորձական աշխատանքներ կատարելիս, յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում պետք է հավաքվեն, ենթարկվեն առաջնային մշակման, տարրալուծվեն և մուտքագրվեն հարգորոշող և հարգադրոշմող կազմակերպության հաշվեկշռում:

13. Փոշենման թանկարժեք մետաղներ պարունակող թափոնից նմուշառումը կատարվում է հետևյալ ձևով՝

ա) ընդհանուր քանակությունը դարձվում է բուրգի տեսքով և դրա տարբեր մասերից վերցվում է որոշակի քանակությամբ

նմուշ.

բ) վերցված նմուշը խառնվում է, մանրացվում, հավասարաչափ հաստությամբ փռվում սեղանին, և ըստ ստորև ներկայացված սխեմայի կատարվում է նմուշառում, որից հետո՝ համապատասխան տարրալուծում:

14. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշմումը կատարվում է՝ ելնելով հարգորոշման քարի վրա ստացված հիմնական համաձուլվածքի և քիմիական տարրալուծման (եթե դա կատարվում է) վերջնական արդյունքներից:

Հարգադրոշման ձևերից են՝

ա) մեխանիկականը,

բ) էլեկտրակայծայինը,

գ) լազերայինը:

15. Թանկարժեք մետաղներից պատրաստված այն իրերը, որոնք ունեն «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) թանկարժեք մետաղների համար սահմանված հարգերից ցածր հարգ, պետք է հարգադրոշմվեն տվյալ հարգին ամենամոտ ցածր հարգով:

Թանկարժեք մետաղներից պատրաստված այն իրերը, որոնք ունեն թանկարժեք մետաղների համար օրենքով սահմանված նվազագույն հարգից ցածր հարգ, ենթակա չեն հարգադրոշմման:

16. Տարբերանիշն ու հարգադրոշմը դրվում են իրի վրա, անվանանիշի դրոշմից աջ՝ համապատասխան հերթականությամբ:

Հարգադրոշմ և տարբերանիշ դնելու համար նախատեսված հարթակը, ինչպես իրերի հիմնական, այնպես էլ երկրորդական ու լրացուցիչ մասերի վրա պետք է լինի արտադրողի կողմից նախապատրաստված:

17. Արտադրողները վերջնական մշակման ժամանակ պարտավոր են թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշմների և տարբերանիշների դրոշմվածքները պահպանել դեֆորմացվելուց և վնասվելուց:

Եթե հարգադրոշմի և տարբերանիշի արտատիպը վնասվել է, ապա հարգորոշող և հարգադրոշմող մարմնում վերահարգորոշումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

18. Այն արտադրողները, որոնք ներկայացնում են թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր՝ գույակցված ոչ թանկարժեք մետաղյա մասերով, պարտավոր են այդ մասերի վրա դնել «Մետաղ» դրոշմը՝ բացառությամբ երկաթյա զսպանակների, ներդիրների և շտիֆտների: «Մետաղ» դրոշմի բացակայության դեպքում ներկայացված իրերը չեն հարգադրոշմվում:

19. Եթե թանկարժեք մետաղներից պատրաստված իրերն անհնար է հարգադրոշմել հավաքած տեսքով, ապա արտադրողին թույլատրվում է, համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ, իրերը հարգադրոշման բերել քանդված վիճակով:

*(19-րդ կետը փոփ. 19.05.16 թիվ 520-Ն որոշում)*

20. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հիմնական մասում են դրոշմվում հարգադրոշմը և տարբերանիշը:

Երկու նույնատիպ մասից բաղկացած՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի (ծխախոտի տուփեր, ականջօղեր, գույք ճարմանդներ և այլն) երկու մասում էլ դրոշմվում են հարգադրոշմը և տարբերանիշը:

Թանկարժեք մետաղներից պատրաստված այն իրերը, որոնց լրացուցիչ և երկրորդական մասերը հեշտ առանձնացվող են և ամրացված չեն հիմնական մասին, դրոշմվում են հարգադրոշմով և տարբերանիշով: Ամրացված և չառանձնացվող լրացուցիչ մասերը միայն հարգադրոշմվում են, իսկ հիմնական մասը դրոշմվում է հարգադրոշմով և տարբերանիշով:

21. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի, որոնք բաղկացած են տարբեր հարգի թանկարժեք մետաղներից, հիմնական մասի վրա դրոշմվում են հարգադրոշմը և տարբերանիշը, իսկ լրացուցիչ մասի վրա դրոշմվում է համապատասխան հարգի հարգադրոշմը: Այն դեպքում, երբ հնարավոր չէ լրացուցիչ մասում դրոշմել հարգադրոշմ, ապա այն դրվում է հիմնական մասում՝ տարբերանիշի կողքին:

22. Վերականգնված և քաղաքացիների կողմից ներկայացված թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը հարգին չհամապատասխանելու դեպքում, քաղաքացու համաձայնության առկայության դեպքում, հարգադրոշմվում են ամենամոտ ցածր հարգով: Համաձայնության բացակայության դեպքում իրերը վերադարձվում են առանց հարգադրոշմման:

23. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վրա առկա հարգադրոշմը և տարբերանիշը պետք է լինեն ընթեռնելի ու համապատասխանեն օրենքով նախատեսված պահանջներին:

24. Թանկարժեք մետաղների համաձուլվածքներից պատրաստված իրերը, որոնք պատված են այլ թանկարժեք մետաղներով, պետք է հարգադրոշմվեն իրի հիմնական մետաղի հարգով:

25. Պարտադիր հարգադրոշման ենթակա չեն օրենքով սահմանված թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը:

26. Հաշվառված անձը տալիս է թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերում թանկարժեք մետաղի պարունակության մասին տեղեկանք (N 4 ձև), որում նշվում են քիմիական տարրալուծման արդյունքում հետազոտվող իրերի և նյութերի անվանումները, հարգերը:

Այն դեպքում, երբ հետազոտման ընթացքում իրերի վրա հայտնաբերվում են Հայաստանի Հանրապետությունում չօգտագործվող կամ ներգողված դրոշմանիշերի դրոշմահետքեր, անհրաժեշտ է այդ փաստը նշել տեղեկանքում:

27. Թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական և այլ կենցաղային իրերը հարգորոշման և հարգադրոշմման համար պետք է հաշվառված անձին ներկայացվեն համաձայն N 5 ձևի դիմում-անդորրագրի, իսկ քիմիական տարրալուծման համար՝ համաձայն N 6 ձևի դիմում-անդորրագրի:

Ձևերը կազմվում են երկու օրինակից: Աշխատանքներն ավարտվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է պատվիրատուին,

իսկ մյուսը մնում է հաշվառված անձի մոտ: NN 5 և 6 ձևերը տպագրվում են մեկ թերթի երկու երեսի վրա:

N 6 ձևի աղյուսակի 8, 9, 10, 14, 15 և 16-րդ սյունակներում նշված թվով իրերը ենթակա են վերադարձման:

28. Իրերը հանձնողի կողմից պետք է տեսակավորված լինեն խմբաքանակներով, որոնք պետք է համապատասխանեն հանձնման-ընդունման փաստաթղթերին:

Իրերի խմբաքանակ համարվում են նույնանուն, միատեսակ, միանման այն իրերը, որոնք ներկայացվել են արժեքների ընդունման մեկ անդորրագրով:

29. Հարգորոշման և հարգադրոշման ներկայացվող իրերը պետք է ընդունվեն հանձնողի ներկայությամբ՝ կշռով, քանակով, ծավալով կամ այլ չափումներով:

Ընդունելիս և հանձնելիս թանկարժեք մետաղները կշռվում են առաջին ու երկրորդ կարգի տեխնիկական, ինչպես նաև էլեկտրոնային կշեռքներով, համապատասխան կշռաքարերով՝ հետևյալ ճշտությամբ՝

ա) ոսկե, պլատինե, պալադիումե իրեր՝

մինչև 1 կգ՝ 0,01 գ,

1 կգ և ավելի՝ 0,1 գ.

բ) ոսկու, պլատինի, պալադիումի համաձուլվածքներ, նախապատրաստվածք՝

մինչև 1 կգ՝ 0,01 գ,

1 կգ և ավելի՝ 0,1 գ.

գ) ոսկի (ձուլահատիկի ձևով)՝ 0,01 գ.

դ) ոսկու, պլատինի, պալադիումի ջարդոն՝ 0,01 գ.

ե) արծաթյա իրեր՝ 0,1 գ.

զ) արծաթի համաձուլվածքներ, նախապատրաստվածք, ջարդոն՝ 1,0 գ:

Կշեռքներն առնվազն տարեկան մեկ անգամ ենթակա են պարտադիր կշռաչափման:

30. Ներկայացված իրերի քաշի կամ քանակի՝ դիմում-անդորրագրի տվյալներին անհամապատասխանության դեպքում իրերն ընդունվում են փաստացի քաշով և քանակով, որոնք ընդունողը նշում է դիմում-անդորրագրի «Ծանոթագրություն» սյունակում, ինչը հաստատվում է ընդունողի և հանձնողի ստորագրություններով:

31. Դիմում-անդորրագրերը պահվում են հարգորոշող և հարգադրոշող մարմնում: Ոչ ճիշտ ձևակերպված դիմում-անդորրագրերը հաշվառված անձի կողմից չեղյալ են համարվում և կարվում՝ ըստ հերթականության՝ մյուս բոլոր անդորրագրերի հետ: Հարգորոշող և հարգադրոշող մարմնում փաստաթղթերի պահպանման ժամկետը 5 տարի է: Հարգորոշման և հարգադրոշման աշխատանքների արդյունքները գրանցվում են դիմում-անդորրագրերի երրորդ օրինակի հակառակ կողմում և ստորագրվում աշխատանքները կատարող աշխատողների կողմից:

32. Հարգորոշման և հարգադրոշման աշխատանքների կատարումից հետո՝ թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական և այլ կենցաղային իրերը դիմում-անդորրագրի առաջին օրինակի հետ վերադարձվում են պատվիրատուին՝ դիմում-անդորրագրի երկրորդ օրինակի վրա հաշվառված անձի գրավոր թույլտվության առկայության դեպքում:

33. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերն ստացողին հանձնելիս՝ դիմում-անդորրագրի առաջին և երկրորդ օրինակների հակառակ կողմում դրվում է դրոշմ (կամ մակագրվում է)՝ «Արժեքները հանձնված են», որից հետո անդորրագրի առաջին օրինակը վերադարձվում է իրերն ստացողին: Իրերը վերադարձնելիս՝ դիմում-անդորրագրերին կցված բոլոր փաստաթղթերի վրա (լիազորագիր, անվանացանկ և այլն) պետք է դրվի դրոշմ (կամ մակագրվի) «Արժեքները հանձնված են»:

34. Հաշվառված անձն իր գործունեության համար պետք է ունենա նվազագույն տեխնիկական հագեցվածություն՝

ա) հարգորոշման սեղան և էտալոնային ասեղներ,

բ) հարգադրոշման սարքավորումներ,

գ) մուֆելային վառարան (1000-1100 օC տաքացնող),

դ) ջրի թորման սարք,

ե) միկրոառաձիգի կշեռքներ,

զ) քիմիական լաբորատորիայի ամաններ,

է) անհրաժեշտ քիմիկատներ և հարգորոշման ու հարգադրոշման գործունեության իրականացման համար անհրաժեշտ այլ պարագաներ:

35. Հարգորոշման և հարգադրոշման մարմնում եղած պահոցները, չիրկիվող պահարանները, որտեղ պահվում են արժեքները (հարգադրոշման, հարգափորձական ասեղներ և այլն, իսկ առանձին դեպքերում՝ նաև ընդունված արժեքները) աշխատանքային օրվա վերջում կողպվում են և կնքվում այն աշխատողի անձնական կնիքով, որը պատասխանատու է արժեքների պահպանման համար:

36. Հաշվառված անձին ներկայացվող թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական և այլ կենցաղային իրերի հարգորոշման ու հարգադրոշման աշխատանքների և դրանց վճարի հաշվառումը կատարվում է հատուկ գրքում (N 7 ձև):

Տարրալուծումների հաշվառումը կատարվում է համապատասխան գրքում (N 8 ձև):

Գրքերը պետք է լինեն համարակալված, կարված և կնքված: Հարգորոշողները և հարգադրոշողները պարտավոր են կատարել կատարված աշխատանքների օրական գրանցում: Հարգափորձական աշխատանքների հաշվառումը կատարվում է յուրաքանչյուր պատվիրատուի համար առանձին: Կատարվում է նաև հաշվառման տարանջատում՝ ըստ թանկարժեք մետաղների տեսակների:

(հավելվածը փոփ. 19.05.16 թիվ 520-Ն որոշում)

Ձև N 1

**ՀԱՐԳՓՈՐՁԱԿԱՆ ԱՍԵՂՆԵՐ**

Ոսկի (հարգ)	Արծաթ (հարգ)	Պլատին (հարգ)	Պալադիում (հարգ)
372	795	890	490
375	800	900	500
413	825	940	840
416	830	950	850
497	855		
500	870		
580	875		
583	905		
585	920		
747	925		
750	955		
913	960		
916	994		
955	999		
958			
996			
999			

Ձև N 2

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱԿԱԶԴՈՒԿՆԵՐԸ**

1. Հակազդուկներ՝ ոսկու համար

1.1. Ոսկու քլորային հակազդուկ

375 հարգի (3.8% Pd պարունակող) ոսկու հարգորոշման համար օգտագործվում է ոսկու քլորային հակազդուկ, որը պարունակում է 6.0 գ/լ ոսկի:

583/585 հարգի սպիտակ ոսկու հարգորոշման համար օգտագործվում է ոսկու քլորային հակազդուկ, որը պարունակում է 18,0 գ/լ Au: 583/585 հարգի սպիտակ ոսկու հարգորոշման համար, որը պարունակում է Ni և Zn, օգտագործվում է ոսկու քլորային հակազդուկ, որը պարունակում է 27.0 գ/լ Au:

Ոսկու քլորային հակազդուկը պատրաստվում է 999.9 հարգի մետաղական ոսկուց կամ ոսկու քրոլաջրածնական թթվից:

1.2. Հակազդուկ, որի հիմքում ընկած է K-ի բիքրոմատ և պղնձի քլորիդ:

Տարբեր հարգերի ոսկյա իրերի հարգորոշման համար օգտագործվում են հետևյալ բաղադրությամբ հակազդուկներ, որոնց հիմքում ընկած է K<sub>2</sub>Cr<sub>2</sub>O<sub>7</sub> (կալիումի բիքրոմատ և CuCl<sub>2</sub> (պղնձի քլորիդ))`

- ա) K<sub>2</sub>Cr<sub>2</sub>O<sub>7</sub> - 5.0 գ,
- CuCl<sub>2</sub> - 10.0 գ,
- թորած ջուր - 100 մլ,
- H<sub>2</sub>SO<sub>4</sub> (d=1.83) - 6.0 մլ.
- բ) K<sub>2</sub>Cr<sub>2</sub>O<sub>7</sub> - 10.0 գ,
- CuCl<sub>2</sub> - 5.0 գ,
- թորած ջուր - 100 մլ,
- H<sub>2</sub>SO<sub>4</sub> (d=1.9) - 9.0 մլ:

1.3 Թթվային հակազդուկներ

NN	Ոսկու հարգը	Ազոտական թթու	Աղաթթու (d=1.19)	Թորած ջուր
ը/կ				
1.	375	59.5 մլ	-	40.5 մլ
2.	416	66.0 մլ	-	34.0 մլ
3.	500	100.0 մլ		-
4.	583/585	46.0 մլ	4 կաթիլ	54.0 մլ
5.	750	59.3 մլ	1.1 մլ	39.6 մլ
6.	916	70.4 մլ	1.3 մլ	28.3 մլ
7.	958	78.7 մլ	2.0 մլ	19.3 մլ
8.	999	78.7 մլ	2.0 մլ	19.3 մլ

2. Հակազդուկներ` արծաթի համար

2.1. Կալիումի բիքրոմատի հակազդուկ

- Բաղադրությունը` կալիումի բիքրոմատ - 9.4 գ,
- ծծմբական թթու (d=1.8) - 6.8 մլ,
- թորած ջուր - 100.0 մլ:

Հակազդուկ պատրաստելու համար K<sub>2</sub>Cr<sub>2</sub>O<sub>7</sub>-ը լուծում են թորած ջրում` ավելացնելով ծծմբական թթու:

2.2. Կալիումի հեքսաֆեռոցիանատի հակազդուկ

Հակազդուկը պատրաստելու համար պատրաստում են 2 լուծույթ`

1-ին լուծույթ` 44.0 գ կալիումի ֆեռոցիանատը լուծում են 100.0 մլ թորած ջրում:

2-րդ լուծույթ` նոսրացված ծծմբական թթու (1:4):

Հակազդուկը պատրաստում են աշխատանքից առաջ` երկու լուծույթները խառնելով հետևյալ հարաբերությամբ` 20 մլ` 1-ին լուծույթից, և 5.0 մլ` 2-րդ լուծույթից:

2.3. Ag-ի նիտրատի հակազդուկ

NN	Արծաթի հարգը	Արծաթի նիտրատ	Թորած ջուր	Մանրթափոց
ը/կ				

1.	800	0.50 գ	100.0 մլ	Արծաթի նիտրատի հակազդուկին
2.	830	0.52 գ	100.0 մլ	ալեւացնում են ազոտական թթու`
3.	875	2.5-3.0 գ	100.0 մլ	աշյն դեպքում, երբ անհրաժեշտ է համապատասխան հարգի արծաթի համաձուլվածքի ռեակցիան ուժեղացնել:
4.	925	0.77 գ	100.0 մլ	
5.	960	0.8 գ	100.0 մլ	
6.	999	0.83 գ	100.0 մլ	

3. Արծաթ-պալադիումային համաձուլվածքների հակազդուկներ  
 Արծաթ-պալադիումային համաձուլվածքների Cpllg 810-190 և Cpllg 750-250 համար օգտագործվում են`
- 3.1. 750 հարգի ոսկու համար նախատեսված թթվային լուծույթ, որը նորացված է թորած ջրով` 1:1 հարաբերությամբ:
- 3.2. Կալիումի յոդիդի հակազդուկով, որը նախատեսված է պլատինի համար:
4. Հակազդուկներ` պլատինի համար  
 Հարգափորձական քարի վրա 950 հարգի պլատինե իրերի և համաձուլվածքների համար օգտագործվում են`
- 4.1. 958 հարգի ոսկու համար նախատեսված թթվային հակազդուկներ
- 4.2. Կալիումի յոդիդի հակազդուկ  
 Բաղադրությունը` կալիումի յոդիդ - 10.0 գ,  
 ազոտական թթու (d=1.4) - 25.0 մլ,  
 աղաթթու (d=1.19) - 75.0 մլ:
- Հակազդուկ պատրաստելու համար 10.0 գ կալիումի յոդիդը լուծում են 100.0 մլ նշված թթուների խառնուրդի մեջ:
5. Հակազդուկներ` պալադիումի համար
- 5.1. Հարգափորձական քարի վրա 500 հարգի պալադիումե իրերի հարգորոշման համար օգտագործվում է կալիումի յոդիդի հակազդուկ, որը նախատեսված է նաև պլատինի համար (4.2-րդ կետ):
- 5.2. 850 հարգի իրերի և համաձուլվածքների համար` նույն հակազդուկը (4.2-րդ կետ), որը նորացված է թորած ջրով` 3:1 հարաբերությամբ:

Ձև N 3

\_\_\_\_\_ (հաշվառված անձի անվանումը)

**ԴԻՄՈՒՄ**

Արժեքների \_\_\_\_\_ ընդունման մասին  
 (հարգորոշում, տարրալուծում, հարգադրոշմում  
 և այլն)

ումից \_\_\_\_\_  
 (կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (գործունեության իրականացման վայրը կամ բնակության վայրը)

NN	Մետաղի տեսակը	Իրի անվանումը	Թիվը (հատ)	Քաշը (գրամ)	Ծանոթագրություն

Ընդամենը \_\_\_\_\_

Իրեր (իր) ներկայացնող \_\_\_\_\_  
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.

Ձև N 4

\_\_\_\_\_  
(հաշվառված անձի անվանումը)

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման N \_\_\_\_\_ հաշվառված անձը քիմիական տարրալուծման հիման վրա հաստատում է թանկարժեք մետաղների հետևյալ պարունակությունը իրերում (ձուլակտորների, տաշեղների, զարդերի և այլն), որոնք ներկայացված են \_\_\_\_\_ 200 թ.

(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

NN	Իրի անվանումը	Կշռուկների թիվը	Պարունակությունը (հարգը)			
			և յուրաքանչյուրի			
ը/կ		քաշը (գրամ)	ոսկի	արծաթ	պլատին	պալադիում
			(հարգ)	(հարգ)	(հարգ)	(հարգ)
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____
_____	_____	_____	_____	_____	_____	_____

Հաշվառված անձ \_\_\_\_\_  
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կատարող \_\_\_\_\_  
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.

*(4-րդ ձևը փոփ. 19.05.16 թիվ 520-Ն որոշում)*

Ձև N 5

\_\_\_\_\_  
(հաշվառված անձի անվանումը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ.Տ.

**ԴԻՄՈՒՄ-ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N \_\_\_\_\_**





					_____	_____	_____		_____
					թիվը	քաշը	թիվը	քաշը	999.9
					(հատ)	(գրամ)	(հատ)	(գրամ)	հարգի
1	2	3	4	5	6	7	8	9	10

Իրերի քիմիական տարրալուծում			Հարգադրոշմված իրեր			Դրված	Ծանոթա-
որոշված	մնացորդների	մետաղա-	թիվը	քաշը	հարգը	թիվը	գրուեթյուն
հարգը	քաշը քիմիական	խառնուրդի	(հատ)	(գրամ)		(հատ)	
	տարրալուծումից	կորուստները					
	հետո	տարրա-					
		լուծումից					
		հետո					
11	12	13	14	15	16	17	18

Աշխատանքները կատարել են՝

Հարգորոշում քարի վրա \_\_\_\_\_ Քիմիական տարրալուծում \_\_\_\_\_  
 (կատարող) (կատարող)

Հարգադրոշմում \_\_\_\_\_  
 (կատարող)

Նշված իրերը հանձնեց \_\_\_\_\_ Ընդունեց \_\_\_\_\_  
 (հաշվառված անձ) (պատվիրատու)  
 (ստորագրությունը) (ստորագրությունը)

Ձև N 6

\_\_\_\_\_  
 (հաշվառված անձի անվանումը)  
 \_\_\_\_\_  
 (ստորագրությունը)

Կ.Տ.

**ԳԻՄՈՒՄ-ԱՆԳՈՐՐԱԳԻՐ N \_\_\_\_\_**

Ընդունված է տարրալուծման \_\_\_\_\_

(պատվիրատու)

(գործունեության իրականացման վայրը կամ  
 բնակության վայրը)



ը/կ   Ենթակա նյութի		մետաղներ		մեթոդը		ների թիվը		համար ծախսվել	
անվանումը		( հատ )				( հատ )		Է կշռուկ	
								քանակ   գրամ	
1	2	3	4	5	6	7			

Տարրալուծումից հետո			Տարրալուծման			Տարրալուծումից հետո			Ծանոթա-
ստացված մաքուր			արդյունքները			մնացորդը (գրամ)			գրուկը
մետաղի քաշը (գրամ)			տոկոսով կամ						
			հարգերով						
ոսկի   արծաթ   պլատինի			ոսկի   արծաթ   պլատինի			ոսկի   արծաթ   պլատինի			
խմբի			խմբի			խմբի			
մետաղներ			մետաղներ			մետաղներ			
8	9	10	11	12	13	14	15	16	17

Հաշվառված անձ \_\_\_\_\_  
 (ստորագրությունը)  
 Նշված իրերը հանձնեց \_\_\_\_\_ Ընդունեց \_\_\_\_\_  
 (կատարող (ստորագրությունը) (պատվիրատու (ստորագրությունը))

Ձև N 8

Հաշվառված անձ \_\_\_\_\_

ԳԻՐՔ

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱԳՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒՄՆԵՐԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ**

NN   Պատվիրատուի անվանումը		Տարրալուծման		Տարրալուծման		Տարրալուծման	
ը/կ   (ֆիզիկական անձի համար`		Ենթարկված իրերի		եղանակը		համար վերցված	
անունը, ազգանունը)		անվանումները				իրերի թիվը (հատ)	
դիմում - անդորրագրի							
համարը, ամսաթիվը							
1	2	3	4	5			

| Վերցված է | Որոշված հարգը կամ | Մետաղահատիկի | Ծախսվել է | Ծանոթագրուկը |  
 | կշռուկ | թանկարժեք մետաղի | քաշը (գրամ) | արծաթ (գրամ) |

_____   պարունակությունը					
թիվը	քաշը	(տոկոս)			
(հատ)	(գրամ)				
_____	_____	_____	_____	_____	_____
6	7	8	9	10	11